ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
Քարաձորի համայնքապետարան

N 148 17 .08. 2020 թ.

ՀՀ Լոռու մարզպետ պարոն
Ա. Ղուկասյանին

Կից Ձեզ եմ ներկայացնում Քարաձոր համայնքի ղեկավարի թիվ 16 որոշումը:
Առդիր1 էջ:

Համայնքի ղեկավար Հ. Ռուստոմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ
գ.Քարաձոր փողոց 1 շենք13
04 օգոստոս .2020

## ՈՐՈՇՈՒՄ N16

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.06.2010թ. թիվ 186- Ն հրամանով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքով հաշվի առնելով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից որ ինքնակամ կառույցը համապատասխանում է հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների ծրագրերի պայմաններին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. Մայիսի 18-ի 912-Ն որոշմամբ, քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2րդ և 5-րդ մասերով, հիմք ընդունելով <<ԻՆԵՔՍ>> ՍՊԸ-ի կողմից 03.08.2020 թ. կազմված հողամասի և շինությունների հատակագիծը և մասնագիտական եզրակացությունը թիվ 0144364 վկայականը, << ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ>> ՍՊԸ-ի տնօրենի դիմումը

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզի գ. Քարաձոր Լենինականի խճուղի 2 հասցեում սեփականության իրավունքով (սեփականության իրավունքի գրանցման թիվ 014436421.06.1999թ. ) <<ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ>> ՍՊԸ-ին պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված , որոնք վտանգ չեն սպառնում քաղաքցիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, հարկադիր սերվիտուտ պանանջելու իրավունք չառաջացնող, 2013թ.

Կառուցված 34.52 քառ./մ սպասարկման սենյակի և 26 քառ./մ. Մակերեսով ծածկի նկատմամբօրենքի ուժով ճանաչել << ԱՐՏՅՈՄ ԵՎ ՄԱԹԵՎՈՍ>> ՍՊԸ-ի Սեփականության իրավունքը:

2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 53258.0 դրամը 60 օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի ճշտգրտված սահմանների հատակագծով:
4. Պետական գրանցման ներկայացված պարիսպը և հարթակը ընդգրկվածմեն թիվ 0144364 սեփականության վկայականում որպես օրինական կառույցներ:
5. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժնում:

Քարաձոր համայնքի ղեկավար՝ Հ. Ռոստոմյան

04.08.2020թ. գ. Քարաձոր